ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-29-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՆԱՆՉԱՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Լարիսա Արիստակեսյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի փորձագետ:

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ՉԺՀ), ք. Նանչան, 2025 թվականի օգոստոսի 4-29-ը:

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
   ՉԺՀ առևտրի նախարարության Ծյենսիի արտասահմանյան ուսումնասիրությունների մասնագիտական քոլեջ

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ ՉԺՀ առևտրի նախարարության Ծյենսիի արտասահմանյան ուսումնասիրությունների մասնագիտական քոլեջի կողմից կազմակերպված «Զարգացող երկրների համար ներքին շրջաններում օտարերկրյա կապիտալի ներդրում և օգտագործում» խորագրով դասընթացի նպատակը զարգացող երկրներին ներկայացնել ՉԺՀ տնտեսական և առևտրային քաղաքականությունը, օտարերկրյա ներդրումների ներգրավման փորձը, ինչպես նաև խորացնել գործընկերային կապերը:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝**

   Գործուղման ընթացքում քննարկվել են «Զարգացող երկրների համար ներքին շրջաններում օտարերկրյա կապիտալի ներդրում և օգտագործում» խորագրով դասընթացի շրջանակներում չինական փորձի արդյունավետությունը՝ ապահովելով զարգացող երկրներում դրանց կիրառելիությունը:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ նվիրված Չինաստանի մշակույթին, զարգացմանը և մարտահրավերներին: Կազմակերպվել են տեխնիկական այցեր Շանհայ (Shanghai), Շենժեն (Shenzhen), Գուանդոնգ (Guangdong), Գանժոու (Ganzhou) և Ջիանգխի (Jiangxi) քաղաքների կազմակերպություններ և ձեռնարկություններ: Այցելել ենք Շենժենում գտնվող «TOPBAND Co., Ltd.» որը մասնագիտացված է խելացի վերահսկման համակարգերի լուծումների ոլորտում: Դասընթացները անց են կացվել «Jiangxi Vocational College of Foreign Studies, Nanchang»-ում, որը համարվում է Չինաստանի առաջատար գիտահետազոտական կենտրոններից մեկը:

Դասընթացի ավարտին հայկական կողմը հանդես է եկել ելույթով և ներկայացրել սահիկաշար:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հաշվի առնելով գործուղման բնույթը (դասընթաց)՝ որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ ապահովելու սույն դասընթացի շարունակականությունը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Լարիսա Արիստակեսյան

04 սեպտեմբեր 2025թ.